

ԳՐԻԳՈՐ ԲԱԿՈՒՐՅԱՆԻ «ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ» ՄԵՋ ՀԻՇԱՏԱԿՎՈՂ
 «ΑΝΙΔΡΥΤΟΝ ΕΘΝΟΣ»-Ի («ԱՆԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԻ») ՄԱՍԻՆ

ՀՐԱՋ ԲԱՐԹԻԿՏԱՆ

«Византийский временник» հանդեսի նախահղափոխական XI հատորի հավելվածում ասումպսիոնիստ Լուի Պետին առաջին անգամ հրատարակեց ԺԱ դարի բյուզանդական հայազգի նշանավոր ռազմական ու պետական գործիչ, Արևմուտքի դոմեստիկոս Գրիգոր Բակուրյանի կողմից Ֆիլիպպոպոլիս (Պլովդիվ) քաղաքի մերձակայքում Պետրիցոս (Բաշկովո) վայրում կառուցված վանքի «Կանոնադրությունը» (Տիպիկոնը)¹: Այդ «Կանոնադրությունը», որի հեղինակը, ի դեպ, նույն Գրիգոր Բակուրյանն է, ահա 75 տարի է, ինչ մանրակրկիտ ու բազմակողմանիորեն ուսումնասիրվում է բյուզանդագետների, հայագետների, վրացագետների, սլավոնագետների և այլ մասնագետների կողմից, որոնց հետաքրքրում են այդ հուշարձանի բարձրացրած բազմաթիվ ու ամենատարբեր հարցերը: Այդուհանդերձ, մի շարք խնդիրներ դեռևս բավարար լուսաբանություն ու լուծում չեն գտել: Դրանցից մեկը ԺԱ դարում Պետրիցոսի շրջանում ապրող ազգաբնակչության էթնիկական կազմին է վերաբերում: Այդ մասին Գրիգոր Բակուրյանի «Կանոնադրության» մեջ «պարզ» ասված է, սակայն եթե հեղինակի խոսքերը պարզ ու հասկանալի էին իրեն և իր ժամանակակիցներին, ապա 900 տարի անց մենք ստիպված ենք աշխատանք թափել՝ պարզելու համար նրա ասածը: «Կանոնադրության» մեջ գրված է, թե Գրիգոր Բակուրյանը վանքը կառուցել է, ինչքան դա իրեն թույլ էին տալիս իր կարողություններն ու ժանր ժամանակները, «Ֆիլիպպոպոլիսի բանակաթեմում՝ ավելի որոշակի՝ այդ բանակաթեմի հյուսիսային մասում բնակվողների՝ ἀνιδρυτον ἐθνος-ի մեջ, մի ամուր հովտում, տեղացիների կողմից Պետրիցոս կոչվող և վասիլիկիս վերանվանվող գյուղի սահմաններում»²:

Նախքան բուն նյութին անցնելն ասենք, որ ἀνιδρυτος նշանակում է «անկայուն», «թափառող», մի խոսքով՝ անվերջ շարժման մեջ գտնվող, հասկանալի է, ժողովուրդ (ἐθνος): Ἀνιδρυτος բառին այդ իմաստն են տալիս

¹ Louis Petit, Typikon de Grégoire Pacourianos pour le monastère de Petritzos (Bačkovo) en Bulgarie («Византийский временник», приложение к XI тому, № 1—2, СПб., 1904).

² «Georgica 5. Сведения византийских писателей о Грузии», греческие тексты с грузинским переводом издал и примечаниями снабдил С. Г. Каучишвили, Тбилиси, 1963, с. 116—118. Ահադ. Ս. Կաուիշվիլին ἀνιδρυτον ἐθνος բառերը վրացերեն թարգմանել է ինչպես մենք՝ «անկայուն ժողովուրդ», թողնելով առանց տրեւէ բացատրության: Ավելորդ չէ նկատել, որ «Կանոնադրության» վրացերեն խմբագրության մեջ հասած բնագրից երևում է, որ թարգմանիչը ճիշտ չի հասկացել հունարեն հիշյալ բառերը և «անկայուն ժողովուրդն» այստեղ գարձել է «անկայուն ժամանակներ», ըստ Ա. Շանիձեի ուսանելի թարգմանության՝ «[сообразно] с обстоятельствами непостоянных и непрочных времен». (А. Шанидзе, Грузинский монастырь в Болгарии и его Типик. Грузинская редакция Типика, Тбилиси, 1971, с. 264 и 286).

Հունարենի բոլոր բառարանները, բայց նպատակահարմար ենք գտնում դիմել Սկարլատոս Վիզանտիոսի Հունարենից-Հունարեն մեծ բառարանին, ցույց տալու համար, թե ἀνιδρυτός բառի դիմաց նա հունարեն ինչ հոմանիշներ է բերում: Նա գրում է՝ ἀνιδρυτός (անկայուն, անհաստատուն), ապա նաև՝ ὁ ἀνιδρυτός (նա, ով թափառում է)³: Այսպիսով, մեր բնագրի ἀνιδρυτός-ի դիմաց ունենք երկու հոմանիշ՝ ἀνιδρυτός և ἀνιδρυτός, «անկայուն» և «թափառող»:

Ով զբաղվել է Գրիգոր Բակուրյանի «Կանոնագրությամբ», որպես կանոն անդրադարձել է Հիշյալ բառերին, քանզի դժվար է չպատկերացնել նրանց կարևորությունը Պետրիցոսի վանքը հատկապես տվյալ վայրում կառուցելու նպատակները պարզելու տեսակետից: Ֆիլիպպուպոլսի այդ ժամանակաշրջանի բնակչության էթնիկական կազմը պարզելն ուսումնասիրողների համար պրոբլեմ չէր⁴: Եթե ոչ մի տվյալ էլ չլիներ, ապա ժամանակակից պատմիչ Աննա Կոմեննայի հաղորդածը բավական էր: Նա գրում է. «Ֆիլիպպուպոլսի ողջ բնակչությունը, փոքր բացառություններով, մանիքեցիներ (պավլիկյաններ—Հ. Բ.) էին, որոնք բռնանում էին անդալսիկ քրիստոնյաների վրա, հափշտակում նրանց ունեցվածքը, քիչ, ավելի ճիշտ՝ ոչ մի ուշագրություն չդարձնելով կայսեր կարգադրություններին: Նրանք գնալով բազմանում էին և Ֆիլիպպուպոլսի ամբողջ շրջանում բոլորն էլ հերետիկոսներ էին: Սրանց էր միանում նաև մի ուրիշ՝ նայերի դաուն գետը, մի ուրիշն էլ, որ բխում էր Հակոբի ամենապղտոր ակունքներից»⁵:

Ինչպես ասացինք, «մանիքեցիների» տակ ենթադրվում են պավլիկյան աղանդավորները, որոնք Ֆիլիպպուպոլսում առաջին անգամ հաստատվեցին՝ Կոստանդին Ե կայսեր կողմից՝ 756 թ.: Հիշյալ կայսրը նրանց գաղթեցրել էր Կարինից և Մելիտենից (Մալաթիա): Բացառված չէ, որ այս «մանիքեցիների» մեջ էին Հովհաննես Չմշկիկի (969—976) կողմից «նալիբներից և հայկական վայրերից» հենց Ֆիլիպպուպոլսի գաղթեցված թոնդրակեցիների⁶ հետնորդները:

«Տեղաբնիկ քրիստոնյաների» տակ ամենայն հավանականությամբ ենթադրվում են քաղկեդոնականները՝ հույներ, բուլղարներ և այլն, «հայերի գառն գետը», անկասկած, միաբնակ հայերն են, հայադավանները, իսկ «Հակոբի ամենապղտոր ակունքներից» հոսող գետը՝ հակոբիկ ասորիները, որոնք, ինչպես հայտնի է, Կարինից և Մելիտենից հայ պավլիկյանների հետ Ֆիլիպպուպոլսի տեղափոխվեցին Կոստանդին Ե-ի կողմից: Ահա սրանցից էր բաղկացած Ֆիլիպպուպոլսի բնակչությունը Գրիգոր Բակուրյանի կողմից Պետրիցոսի վանքի կառուցման ժամանակ⁷: Բայց ո՞ւմ նկատի ունի Գրիգոր

³ «Λεξικόν της Ἑλληνικῆς γλώσσης», συντεθέν υπό Σ. Δ. τῶν Βυζαντίου, Ἐν Ἀθήναις, 1879, τ. 1, 111.

⁴ Այդ մասին մանրամասն ու հանգամանից տե՛ս Catherine Asdracha, Le region des Rhodopes aux XIIIe et XIVe siècles. Étude de géographie historique, Athen, 1976, p. 50—90.

⁵ Anne Comnène, Alexiade, texte établi et traduit par B. Leib, t. III, Paris, 1967, p. 180—181 (Այս և հետագա բնագրային ընդգծումները մերն են—Հ. Բ.):

⁶ Հ. Մ. Բարթիկյան, Պավլիկյանների առապելական ծագումը ըստ հին բուլղարների մի ձեռագրի (ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1957, № 1, էջ 89):

⁷ Ֆիլիպպուպոլսի տվյալ շրջանի հայության մասին տե՛ս Catherine Asdracha, նշվ. աշխ., էջ 72—74:

Բակուրյանը կանկրեւտ: Գրելով «անկայուն ժողովրդի» մասին, նա, անտարակույս, նկատի ունի կոնկրետ էթնիկական միավոր: Այս հարցով զբաղվող մասնագետների եզրակացությունները հեռու են բավարար լինելուց: Առաջիններից մեկը Ն. Մառն էր, որ աշխատեց մեկնաբանել *ἀνιδρυστον ἔθνος*-ը՝ Այդ արաբաֆայությունը թարգմանելով «неуживчивый народ» (աւնհաշտ. կովարար ժողովուրդ), նա այն նույնացրեց աղբյուրներից արդեն հայտնի հայ միաբնակների ու պալիկյանների հետ⁸:

Հետաքրքրությունը Գրիգոր Բակուրյանի «Կանոնադրության» նկատմամբ աճեց հատկապես վերջին երեսուն տարում: Բացի բուլղարներից, նրա վրա ուշադրություն դարձրեցին սովետական ու արեւմտաեվրոպական մասնագետները: Բնական է, բոլորն էլ այս կամ այն չափով հետաքրքրվեցին խնդրո առարկա բառերով և յուրովի մեկնաբանեցին դրանք: Բուլղար պատմաբան Վ. Նիկոլաևը, որ մանրակրկիտ ու լայնածավալ հետազոտություն է նվիրել Պետրիցոսի վանքին ու նրա «Կանոնադրությանը», մեզ հետաքրքրող նախադասությունը թարգմանել է. «при неспокойном народе, който живее там» (աայնտեղ բնակվող անհանգիստ ժողովրդի մեջ)⁹, չփորձելով կոնկրետացնել, թե ինչ ժողովրդի մասին է խոսքը:

Գրիգոր Բակուրյանի «Կանոնադրության» բուլղարերեն թարգմանությունն իրականացնողները Վ. Նիկոլաևի նման թարգմանել են «неспокоен народ» և գրել. «Այստեղ, հավանաբար նկատի ունի բուլղար ժողովրդին, որ անվերջ խռովություններ ու ապստամբություններ էր բարձրացնում» բյուզանդական իշխանությունների դեմ: Որպես «ապացույց» նրանք նշում են, թե վանքի կառուցումից մի քանի տարի անց (1086) Գրիգոր Բակուրյանը կովի բռնվեց ապստամբություն բարձրացրած պալիկյանների և նրանց դաշնակից պեչենեգների դեմ¹⁰: Բայց պալիկյաններն ու պեչենեգները «բուլղար ժողովուրդ» են...

Ճրանսիացի բյուզանդագետ Կ. Ասգրախան *ἀνιδρυστον ἔθνος*-ը մեկնաբանում է այսպես. «*ἀνιδρυστον* ածականն այստեղ վերաբերում է մեկին, որ հանգիստ չի մնում, հետևաբար նշանակում է խռովարար: Կարելի է ենթադրել նաև, — շարունակում է նա, — որ *ἀνιδρυστον* նշանակում է *φθλινος* (կամ կիսաքոշվոր՝ տվյալ դեպքում), սակայն չհեռանալով խռովարարի իմաստից, քանզի երկու իմաստներն էլ, եթե ճշգրտենք, ի վերջո հանգում են նույն բանին»: Ապա նա դրում է, թե խոսքը «բուլղար-բոգոմիլների» մասին է¹¹:

Ահադ. Պ. Լըմերլը խնդրո առարկա բառերը թարգմանել է *peuple turbulent*¹² (աւնհանգիստ ժողովուրդ), չփորձելով կոնկրետացնել նրանց իմաստը:

⁸ ՏՃ՝ «Типик Григория Пакуриана», введение, перевод и комментарий В. Арутюнов и Фидания. Ереван, 1978, с. 60.

⁹ В. С. Николаев, Един феодальный институт от XI век в наши дни. с. 5. специально предназначение. Манастирът на Григорий Бакуриани (Пакуриан) — средище на византийски прозелитизъм между пловдивските армено-павликяни («Известия» на Института за българска история, София, 1951, № 1—2, с. 120).

¹⁰ «Извори за българската история», т. XIV, София, 1968, с. 41, пр. 1.

¹¹ Catherine Asdracha, *Եղվ. աշխ.*, էջ 62—63.

¹² P. Lemerle, *Cinq études sur le XI^e siècle byzantin*, Paris, 1977, p. 134.

Գրիգոր Բակուրյանի «Կանոնադրությանը» նվիրված վերջին հատուկ մե-
նադրությունը պատկանում է Վ. Արուստյանովա-Ֆիդանյանին¹³։ Նա իր գրքում
հրատարակել է նաև «Կանոնադրության» հունարեն բնագրի ռուսերեն ամ-
բողջական թարգմանությունը։ Հասկանալի է, որ նա չէր կարող անուշադրու-
թյան մատենի և *ἀνίδρυτος ἔθνος*-ը։ Իրավացիորեն մերժելով ն. Մառի մեկ-
նարանությունը («неуживчивый народ» — «անհաշտ, կովարար ժողովուրդ»),
նա գտնում է, որ խոսքը «кочевой» (քոչվոր), «неустроенный» (աֆարե-
կարդ, անկազմակերպ), «живущий беспорядочно», «варварски» (աֆարեկարդ,
բարբարոսաբար ապրող) ժողովրդի մասին է¹⁴ և այդպես էլ թարգմանում է
մեղ հետաքրքրող բառերը. «варварский народ» (բարբարոսական ժողո-
վուրդ)։ Իր միտքը հաստատելու համար Վ. Արուստյանովա-Ֆիդանյանն ան-
հաջող կերպով վկայակոչում է Սորբոնի համալսարանի պրեզիդենտ է. Ար-
վելյերի՝ բյուզանդագետների միջազգային 14-րդ կոնգրեսում կարգացած զե-
կուցումը, որտեղ վերջինս ցույց է տալիս, թե համաձայն բյուզանդական
«կայսերական թեորիայի» (*idée imperiale*) Բյուզանդական կայսրու-
թյունից դուրս գտնվում է «բարբարոս աշխարհը», *ἀνίδρυτος ἔθνος* — ների
ἀκροαίμα-ն (անկայուն ժողովուրդների խառնափնթորությունը)¹⁵։ Սրանից
Վ. Արուստյանովա-Ֆիդանյանը եզրակացնում է, որ հռոմեյն այս բնորոշումը
(իմա՝ «живущий варварски» — Ղ. Բ.) կարող էր տարածել Ֆիլիպպոպոլսի
բանակաթեմի ամբողջ բնակչության վրա։ Իրոք, — շարունակում է նա, — Թրա-
կիայում ապրում էին բազմաթիվ պավլիկյաններ և եղել է հայ-միաբնակ-
ների մեծ զաղութը¹⁶։

Կարճ ասած, Վ. Արուստյանովա-Ֆիդանյանի համոզմամբ հռոմեյն կարող
էր «բարբարոս» անվանել Ֆիլիպպոպոլսի բանակաթեմի, դեռ ավելին, Թրա-
կիայի համայն բնակչությանը։ Նախ հռոմեյն չէր կարող այդպիսի բան ասել,
թեկուզ այն պատճառով, որ Ֆիլիպպոպոլսի բանակաթեմի բնակչության մեծ
մասը երևի հենց այդ հռոմեյներից էր բաղկացած¹⁷։ Երկրորդ, է. Արվելյերը
խոսում է Բյուզանդական կայսրության սահմաններից դուրս գտնվող «բար-
բարոսական» աշխարհի մասին, հենց այդ աշխարհում ապրող *ἀνίδρυτος*
ἔθνος-ների (անկայուն ժողովուրդների, հոգնակի) խառնափնթորության մա-
սին։ Ֆիլիպպոպոլսի բանակաթեմը Բյուզանդական կայսրության մասն էր
կազմում և Կոստանդնուպոլսին ամենամոտիկ գտնվող բանակաթեմներից էր
(Ֆիլիպպոպոլսի մետրոպոլիտությունը անմիջականորեն ենթարկվում էր
Կոստանդնուպոլսի պատրիարքությանը)¹⁸։ Հետևաբար, կայսրության սահ-
մաններում ապրող Գրիգոր Բակուրյանի հիշատակած որոշակի, մեկ *ἀνίδρυτος*
ἔθνος-ի (եզակի) և է. Արվելյերի հիշատակած կայսրության սահմաններից

¹³ Տե՛ս ծան. 8։

¹⁴ Նույն տեղում, էջ 60—61։

¹⁵ H. Ahrweiler, La frontière et les frontières de Byzance en Orient (XIV Congrès International des Etudes Byzantines, Bucarest 6—12 Septembre 1971, Rapports II, p. 8).

¹⁶ «Типик Григория Пакуриана», с. 61.

¹⁷ «Georgii Acropolitae Opera», I, rec. A. Heisenberg, Lipsiae, 1903, p. 76, հմմտ. Catherine Asdracha, նշվ. աշխ., էջ 54, ծան. 6։

¹⁸ Ընեղոսի Դոքսապատոի Կաթողիկոսության պատրիարքական աթոռոցն, հրա-
տարակեց Յրանց Նիկուլաոս Ֆինկ, Վաղարշապատ, 1902, էջ 31։ Նաև Catherine Asdracha, նշվ. աշխ., էջ 155։

դուրս ապրող բազմաթիվ օւիծօստ քննչ-ներ (հոգնակի) միջև ոչ մի ընդհանուր բան չկա: Արդ, եթե Բյուզանդական կայսրության սահմաններից դուրս ապրող ժողովուրդները համարվել են ու կոչվել «բարբարոսներ»¹⁹, «թափառական քոչվոր ժողովուրդներ» (է. Արվելների օւիծօստ քննչ-ները հենց «թափառական քոչվոր ժողովուրդներ» պիտի թարգմանել), ապա չի կարող այդպիսին լինել կայսրության սահմաններում մշտապես ապրող որոշակի, մեկ ժողովուրդը, քանզի նույն է. Արվելների ասելով, համաձայն այդ նույն *idée imperiale*-ի, «հռոմեա-բյուզանդական սահմանները պարփակում են քաղաքակիրթ աշխարհի ամբողջությունը, Օկյուսենեն»²⁰: Այդ բոլորը վկայում են այն մասին, որ Գրիգոր Բակուրյանի «Կանոնադրության» մեջ հիշվող օւիծօստ քննչ-ը «варварский народ» թարգմանելը արդարացված չէ և չի համոզում, քանզի մի կողմ թողած ամեն ինչ, Գրիգոր Բակուրյանի օւիծօստ քննչ-ը մշտական բնակվում է Ֆիլիպպուպոլսի բանակաթեմի որոշակի տեղում և այդ մասին պարզ գրում է «Կանոնադրության» հեղինակը (το οἰκουμένον):

Այսպիսով հանգում ենք մեկ եզրակացության: Գրիգոր Բակուրյանը դրելով Ֆիլիպպուպոլսի բանակաթեմում, այսինքն Բյուզանդական կայսրության մեջ ապրող օւիծօստ քննչ-ի (եզակի) մասին, անտարակույս նկատի ունի մեկ ժողովուրդ, ռոմալի ժողովուրդը: Այդ ժողովուրդը ոչ մի կերպ չի կարող ո՛չ հույն լինել, ո՛չ բուլղար, քանզի այդ երկուսը ապրում են իրենց սեփական երկրում ու չեն թափառում, այս ժամանակներում հույնացված չեն որպես անկայուն, թափառող ժողովուրդներ: Մնում է պարզել, թե ո՞ր ժողովուրդն էր այս շրջանում Բյուզանդիայում անուն հանել որպես «անկայուն», խիստ ասած՝ «թափառական»: Դրա հստակ ու աներկբա պատասխանը տալիս է հայազգի կայսր Նիկեիոր Բ Փոկասը (963—969): Իր մի օրենքում նա գրում է. «Ա. եթե ճայ գինվորներից»²¹ ոմանք, ովքեր հեռացել են իրենց հողերից և երեք տարի անցկացրել այլ տեղում, և վերադառնալով իրենց հողերը գտել են ի պահ տրված ուրիշի, որպես պարգև տրված այլ աչքի ընկած դինվորների, բանակաթեմային կամ տագմատային արխոնտների, սխրանքներ կատարած զորավարների, կամ էլ վերջապես ուրիշ ոմանց՝ հանրօգուտ օգտագործման նպատակներով, հրամայում ենք. երեք տարին լրանալուց հետո վերադարձող ճայ գինվորներն իրավունք չունեն պահանջելու և ստանալու այդպիսի հողերը: Հայազգի կայսրը բացատրում է իր օրենքի լույս աշխարհ գալու դրդապատճառները. «Որովհետև, — գրում է նա, — եթե ճայոց անկալուն (բնագրում՝ ἄστατον, հիշենք Սկարլատոս Վիզանտինոսի օւիծօստ բառի դիմաց տված հոմանիշը՝ ἄστατος) և անվերջ թափառել սիրող (բնագրում՝ πωλυταγής, հիշենք նախ Վիզանտինոսի օւիծօստ-ի դիմաց դրած երկրորդ հո-

¹⁹ Հունա-հռոմեական ու բյուզանդական աղբյուրներում «բարբարոս» բառը չունի այն իմաստը, ինչ տալիս ենք դրան մենք այսօր: «Բարբարոս» նշանակել է օտարազգի, ո՛չ հույն կամ հռոմայեցի:

²⁰ H. Ahrweiler, նշվ. աշխ., էջ 8.

²¹ Խոսքը Բյուզանդիայի փոքրասիական սահմանամերձ (ակրիտական) նահանգներում ծառայող և այդ ծառայության դիմաց պետությունից մշակելու համար հողաբաժիններ ստացող գինվորների՝ ստրատիոսների մասին է:

մանիշը՝ *ἡς τῆς τοῦ ἀναστα*) բնավորությունն այսպիսի օրենսդրությամբ չսանձավի... ապա ամբողջ հայությունը կը քանա²²:

Հայկական ժագոմ ունեցող կայսրը պիտի որ բոլորից լավ գիտենար իր հայրենակիցների «աղգային բնավորությունը»: Մի բան պարզ է, որ արդեն ժ գարի կեսերին հայերը համարվում էին «անկայուն» ժողովուրդ: Այդ «բնավորությունը», որ հայ ժողովրդի ծանր ճակատագրի արդյունքն էր և բխում էր նրա պետականության անբնականոն գոյությունից, սկսեց հանդես գալ դեռևս Հռոմի ու Պարսկաստանի՝ Հայաստանի համար մղվող պայքարի ժամանակաշրջանում և ամբողջ հասակով կանգնեց 387 թ. Հայաստանի՝ Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև բաժանվելուց և հայոց Արշակունյաց հարստության վերջնական անկումից հետո (428): Հայ ժողովուրդը, ընկնելով երկու խոշոր տերությունների լծի տակ, իր ֆիզիկական գոյությունն ապահովելու համար անգամ էր շարունակ խուսանավել նրանց միջև, գաղթել Հայաստանի մի կեսից մյուսը: Արաբական տիրապետության օրոք պատկերը չփոխվեց: Այս անգամ «գաղթը» հիմնականում մի ուղղությամբ էր կատարվում՝ Հայաստանից Բյուզանդիա: Ահա քաղաքական նման պայմանների հետ կապված՝ հայ ժողովրդի անընդհատ տեղաշարժերը Բյուզանդիայում հայերի համար «անկայուն», «անվերջ թափառող» ժողովրդի տխուր համբավ էին ստեղծել, որն արտացոլվել է անգամ կայսերական հրովարտականերում: Ծ՛վ նիկեփոր Բ Փոկասը, և՛ Գրիգոր Բակուրյանը նույն ժողովրդի «աղգային բնավորությունը» նշում են նույնիմաստ տարբեր բառերով: Ընդ որում, առաջինը պարզիպարզո գրում է, որ այդ ժողովուրդը հայերն են, որով հնարավորություն է տալիս երկրորդի «անանուն» ժողովրդի պատկանելիության հարցը հաշտությամբ լուծելու: Ավելացնենք այստեղ, որ Գրիգոր Բակուրյանը գրելով *ἀνὴρ ὁσὸν ἕθνος* նկատի ունի հայկական էթնոսն ընդհանրապես, այդ հասկացողության մեջ նա պարփակում է հայերին ամբողջությամբ՝ առանց դավանական հատկանիշների (միաբնակ, երկաբնակ, աղանդավոր և այլն):

Այսպիսով տեսնում ենք, որ Գրիգոր Բակուրյանն իր վանքը կառուցել է հիմնականում հայերով բնակեցված շրջանում: Թե ինչու է նա (կամ բյուզանդական կառավարությունը) այդպես վարվել, այլ և կարևոր հարց է: Դեռևս Ն. Մառը, ոչ առանց հիմքի, գրում էր, որ վանքի առջև դրված էին քաղաքական նպատակներ՝ աշխատանք տանել հայ-պալիկյանների շրջանում²³, Այս եզրակացությունը հետագայում բաժանեցին ուրիշ շատ հետազոտողներ²⁴: Դա, հարկավ, չի բացառվում, բայց դրանով սահմանափակել վանքի դերը, հազիվ թե ճիշտ լինի: Այստեղ պետք է ընդգծել, որ հիշյալ վանքի դերը նախ և առաջ շրջանի ողջ հայության հոգևոր կարիքները հոգալու մեջ էր: Եթե այդ վանքը տեղում մշտապես ապրող հայության նման կարիքները չհոգար, ապա ո՞վ պիտի հոգար: Աղբյուրներից մեզ այդ շրջանում հոգևոր այլ

²² „Nov. XVIII Imp. Nicephori Phocae de fundis militum Armenicorum et hominidarum“, cura J. Zepi et P. Zepi, vol. I, Scientia Aalen, 1962, p. 247.

²³ Н. М а р р, Аркаун—монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах («Византийский временник», т. XII, 1905. отд. оттиск, с. 25).

²⁴ Միայն ակադ. Ա. Շանիսեն է, որ Գրիգոր Բակուրյանի և նրա կառուցած վանքի հայերի հետ առնչություն ունենալու փաստը կատեգորիկ կերպով մերժելու իր սկզբունքին հավատարիմ, գտնում է, որ Ն. Մառի այս ենթադրությունը «կատարելապես անհիմն է» (А. III а н и д з е, նշվ. աշխ., էջ 263):

կենտրոններ հայտնի չեն: Սա սո անգամ ևս վկայում է այն մասին, որ Գրիգոր Բակուրյանի հիմնադրած վանքը հալկական վանք էր (լինելով հայ-քաղ-կեղծունի վանք, նա չէր դադարում հայկական լինելուց), քանզի վրացական վանքը հալերով բնակեցված շրջանում, վրացական ընակչությունից զուրկ շրջանում հիմնադրելն աննպատակ է²⁵: Գրիգոր Բակուրյանի հիմնադրած վանքը չպեաք է համեմատության մեջ գրվի Բյուզանդական կայսրության այլ շրջաններում (Նիկայում, Ամասոսում, Երուսաղեմում, Աթոսում և այլուր) հիմնադրված ազգային այլ վանքերի հետ, որոնց դերը ազգային բնակչություն չունեցող «սուրբ» վայրերում գլխավորապես մշակութային էր: Գրիգոր Բակուրյանի վանքը զուտ մշակութային կենտրոն չէր, այլ առօրյա հոգսերով տարված ու ծանրաբեռնված հոգևոր հիմնարկություն:

Վերջում ավելացնենք, որ բյուզանդական կառավարությունը գավառաբանական առումով խայտառդեպ հայության համար միաբնակ, հայադավան վանք չէր հիմնադրի: Կայսրության սահմաններում հաստատված այդ բնակչության հոգևոր կարիքները, անառակույս, կայսրության պաշտոնական գավառներին հետևողը պիտի հոգար: Այգպես էլ եղավ:

ОБ «ΑΝΙΔΡΥΤΟΝ ΕΘΝΟΣ»-Е («НЕУСТОЙЧИВОМ НАРОДЕ»), УПОМЯНУТОМ В «ТИПИКЕ» ГРИГОРИЯ ПАКУРИАНА

РАЧ БАРТИКЯН

Резюме

Византийский полководец XI в. армянин (халкедоинт) Григорий Пакуриан в своем «Типике» для основанного им в 1083 г. в местности Петринос в северной части Филиппопольской фемы (ныне село Бачково близ Пловдива в Болгарии) монастыря св. Богородицы пишет, что этот духовный центр был построен там, где проживает *ανιδρυστον εθνος* («неустойчивый, странствующий народ»). Исследователи по-разному истолковывают эти слова Пакуриана, считая, что речь идет о павликианах, или о болгарах, или о богомилах, армянах-монофизитах, «варварах» и т. д. Нетрудно догадаться, что Григорий Пакуриан имеет в виду определенный, конкретный народ, который не мог быть ни греческим, ни болгарским, ибо эти народы проживали на собствен-

25 Աւակ. Ա. Շանիճեան քաղ գիտենալով, որ Ֆիլիպպոպոլսում և նրա շրջակայքում վրացական ընակչություն գոյություն չունի, որով վրացական վանքի շինարարությունն այնտեղ պատճառարանված չէ, գրում է, որ Գրիգոր Բակուրյանն իր վանքը կառուցել է հատուկ վրացիների համար, որոնք էին նրա բանակում (А. Шанидзе, *ibid.*, աշխ., էջ 243): Նախ Գրիգոր Բակուրյանի բանակում վրացի զինվորներ լինելու մասին աղբյուրներում որևէ վկայություն չկա, երկրորդ. այդ պնդումը համոզիչ չէ թեկուզ այն պատճառով, որ հազիվ թե որևէ զորավար իր զինվորների (որոնք այսօր այստեղ են, վաղը՝ մի այլ տեղ, դուցե և Վերին Երուսաղեմում) հոգևոր կարիքները հոգալու համար նման հսկայական վանական համալիր կառուցեր: Ավելացնենք նաև, որ իր նույն գործի մի այլ տեղում ակադ. Ա. Շանիճեան Գրիգոր Բակուրյանի վանքի կառուցման միակ պատճառը համարում է ԺԱ դարում Բյուզանդիայում տաճարներ, եկեղեցիներ կառուցելու բոլորին՝ կայսրերին, պատրիարքներին, խոշոր ֆեոդալներին համակած բուռն տենչը (նույն տեղում, էջ 263):

лой территории и в источниках не названы «неустойчивыми», «странствующими». Как видно из византийских источников, тогда таковыми считались армяне. Дело в том, что раздел Армении между Византией и Ираном (387 г.), уничтожение армянской государственности (428 г.), многовековое господство этих соперничавших между собой держав, а затем и господство Арабского халифата создали для армян неустойчивое и невыносимое политическое и экономическое положение, что вынуждало их ради обеспечения своего физического существования лавинировать между завоевателями, переходить из персидской части Армении в византийскую и наоборот, а в эпоху арабского владычества — переселяться в Византию. Это состояние нашло отражение даже в 18-ой новелле императора Никифора II Фоки, в котором армяне названы «неустойчивым», «странствующим» народом. Согласно византийским источникам (Феофан, Анна Комнина, Никита Хониат и др.), начиная с середины VIII в., в Филиппополе существовала многочисленная армянская колония. Это говорит о том, что Григорий Пакуриан под «ἀνιδροτοι εἶδος» подразумевает именно армян, независимо от их вероисповедания (монофизиты, халкедониты, павликиане, тондракиты и т. д.), и что основанный им на густо населенной армянами территории монастырь являлся духовным центром местного армянского населения.